ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 մարտի 2011 թվականի N 17 - Ա

ՉԻՆԱՐԻԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի մարտի 1-ի թիվ Ե 5-897 գրությունը՝

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի թիվ 741-Ա որոշմամբ լուծարվող Չինարիի տնտհաշվարկային ձեռնարկությունում գույքագրում կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արման Գևորգյան	- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
	Անդամներ
Հովհաննես Վարշամյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Միսակ Մելքումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Գրիգոր Փայտյան	– ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
Մարտուն Գալստյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղտեխնիկայի պետական տեսչության տեսուչ /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովին՝ 10-օրյա ժամկետում Չինարիի տնտեսաշվարկային ձեռնարկությունում կատարել գույքագրում և գույքն ու համապատասխան փաստաթղթերը սահմանված կարգով հանձնել լուծարման հանձնաժողովին:
3. Սույն կարգադրության հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ֆ. Ափինյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

22 մարտի 2011թ.
ք. Իջևան